

նույն տարեբերակներու մեր տուած ներկայ նմոյշը բնականաբար ընթերցողին մտքին մէջ պիտի արթնցնէ հարցը՝ թէ ինչ ծագում և ձեռագրական ինչ հիմ ունին անոնք, և աւելի խորն երթալով՝ որոնք են բնագիր օրինակները որոնց վրայ կատարած են մեր սուրբ Նախնիք Նոր կտակարանի հայերէն թարգմանութիւնը:

Մեծ և հիմնական այս հարցը մասամբ արդէն շեշտուած է «Բագմավէպ»ի ներկայ թուին մէջ, ինչպէս և նախապէս, թէեւ ոչ բոլորովին լուծուած, և մենք չենք կարող անով զբաղիլ հոս, որ յատուկ և շատ ընդարձակ ուսումնասիրութեան կը կարօտի: Սակայն, իբրեւ հետեւանք մեր մասնակի աշխատութեան՝ համառօտիւ

զիտել կու տանք որ Յովհաննու Աւետարանի հայ թարգմանութիւնը չէ կարելի նկատել մէկ կամ երկու յոյն ձեռագիրներու վրայէն եղած աշխատութիւն մը, այլ անիկա շատ աւելի օրինակներ և տարբերակներ կ'ենթադրէ, ըլլայ յոյն, ըլլայ ասորի, թէ՛ Աւետարանի և թէ՛ Սուրբ Հարց և եկեղեցական հին գրիչներու (ինչպէս Տատիանոս, Երանոս), զորս ամբողջ աչքի առջեւ ունեցեր է հայ թարգմանիչը և շատ մը ընթերցուածներու մէջէն լաւագոյնը ջանալով ընտրել, կատարած է իր թարգմանութիւնը: Այս ենթադրութիւնը բաւարար լուծում մը կու տայ Յովհաննու հայ թարգմանութեան զանազանեալ և երբեմն նաեւ եզակի տարբերակներուն:

Հ. ԱՅԻՆԱՍ Բ.



Հայկական Գրչագիրք

Մանգր. Ս. Ղազարու

ՓԵՍՍՅ ԵՒ ՀԱՐՍՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ

24. — Գիրք Սողոմոնի. Թ. 376, գր. յետ 1260ի

L'EPOUX ET L'EPOUSE du «Canticum Canticorum»

Livres de Salomon, N. 376, après l'an 1260

ԵՒՍԵԲԻՈՍԻ ԵՄԵՍԱՑԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱԾՈՑ



ԱՐԻՆ ԵՐ առաջ յօդուածաշարքով մը ուսումնասիրութիւն մը կատարեցի «Բագմավէպ»ի մէջ¹ Վանքիս Զեռագրատան Թ. 873 ձեռագրին մէջ պարունակուած Արարածոց մկրտութեան մը վրայ, տալով թէ մեկնութեան և թէ հեղինակին մասին բաւական ծանօթութիւններ, զորս կը ստիպուիմ այստեղ կրկնել ամփոփելով Աստուածաշունչի թարգմանութեան 1500ամեակի առթիւ՝ ստորեւ հրատարակուած հատուածը ծանօթացնելու համար:

Արդ 873 թիւ ձեռագիրը ուրիշ մեկնողական աշխատութիւններու հետ կը պարունակէ նաեւ Արարածոց մեկնութիւն մը, իբրեւ հեղինակ ցոյց տալով Ս. Կիւրղի Աղեքսանդրացին:

Ծանօթ ըլլալով Ս. Կիւրղի նոյնանուն ուրիշ մէկ մեկնութեան «Գեղեցիկ մեկնութիւն» անունով՝ մտքիս մէջ կասկածներ արթնցան փնտռելու իրական հեղինակը, մանաւանդ որ ոճը և լեզուն բոլորովին տարբեր էր Ս. Կիւրղիէն և յետոյ երկու մեկնութիւն նոյն անձին ընծայելն աւելորդ էր:

Փորձութիւն ունեցայ սկիզբները զայն մեր Եզնիկին համարիլ, քանի որ ըստ աւանդութեան այդպիսի աշխատանք մը կատարած էր, մանաւանդ հրապուրուած լեզուին և իմաստներուն գեղեցկութենէն, այնուհանդերձ զանիկա գէթ թարգմանիչն համարելու կարծիքէն չեմ հրաժարած:

Բոլորովին անակնկալ մ'եկաւ փարատելու կասկածներս և անորոշութիւններս. տարօրինակ

զուգահեռութեամբ նոյն ձեռագիրը պիտի ըլլար գաղտնիքի բանալին:

Թիւ 873 ձեռագիրը կը պարունակէր իր վերջերը Ղեւտական գրքին չղծայ մը՝ կազմուած Յոյն և Ասորի սուրբ Հայրերէն. պարզապէս զայն պարզ հետաքրքրութեամբ՝ հանդիպեցայ այնպիսի սողերու՝ որոնք ինծի շատ ընտանի երեւցան, ու «Եւսեբիոս Եմեսացոց Եպիսկոպոսի» անունով առաջ կը բերուէին: Վէց կտոր էին, ու գիւրդին եղաւ բաղդատուութեամբ երեւան հանել բառ առ բառ նոյնութիւնը երկու հատուածներուն: Նոր ճամբան գտնուած էր. Յոյն և Լատին չղծաներու ժողովածոներն ալ ուրիշ նմոյշներ ունէին Եւսեբիոսի անունով՝ ինչ որ մեր ձեռագիրը Ս. Կիւրղի կը համարէր. այսպէս ամէն կասկած և անորոշութիւն փարատած թուեցաւ: Բայց ինչո՞ւ մեր ձեռագիրը զայն Ս. Կիւրղի կ'ընծայէր. միթէ օրինակողի սխալ է: — Թերեւս. բայց իմ կարծիքովս ուրիշ կարեւոր պատճառ մը կայ:

Եւսեբիոս Եմեսացին Գ. դարուն ծաղկած՝ կը պատկանէր Անտիոքեան Դպրոցին, շատ զարգացած և իմաստուն անձնաւորութիւն մը. մեծ գեր ունեցած է Արեւմտեան խնդիրներուն մէջ, մանեկով Արեւմտի շարքերը՝ բայց չափաւորականներու մէջ. որով Եկեղեցիէն իբրեւ Կիսարիոս

1. 1923, էջ 225-8, 353-7. — 1924, 4-5, 65-7, 225-7

սեան ճանչցուած է և իր բաղմամբ իւր գրութիւնն ներն ալ փճացած են իշխանութիւններու կողմէն, և միայն անունները մեզի հասած են: Այնքան ազդեցիկ եղած է որ համարձակած են իր կուսակիցները զինքը Ս. Աթանասի աթոռը բարձրացնել՝ վերջինիս աքսորի ժամանակ. սակայն խոհեմն Եւսեբիոս հրաժարած է Ս. Աթանասի պէս անձի յաջորդն՝ Ըլլաէն, և այն իբրեւ հակառակորդ:

Այս աղանդաւորի հանգամանքն է անշուշտ որ իր գրքերը, յոյն բնագրին մէջն ալ, ուղղափառի անունով ծածկուէին հալածանքէ և կորուստէ փրկուելու համար:

Եւսեբիոսի — այսպէս կրնանք այլեւս կոչել — մեկնութիւնը Անտիոքեան դպրոցին կը հետեւի, որոնք աւելի դրական և գործնական միտք ունէին քան աղեքսանդրեան դպրոցը, ուր այլաբանական մեկնութիւնները չափազանցուած էին, և յետոյ Անտիոք աւելի հմուտ էր, մօտ Ըլլաւով Եբրայական լեզուին, Ս. Գրքի բնագիրներու ստուգման. արդէն պէտք է ըսել որ արեւելեան մեծ աղանդները այս երկու Գալոցնէրու հակամարտութիւններէն ծագեր են:

Հաւատարիմ՝ իր Գալոցին՝ Եմեսացին նախ Ս. Գրքը թարգմանելու հարցին վրայ կը խօսի. շատ խոր, դրական և արդի մտքով կը շօշափէ այդ հարցը, կը քննադատէ շատ մը թարգմանիչներ որոնք լեզուներու և ազգերու հոգին ու լեզուական յատկաբանութիւններն անտեսելով՝ մթութիւն առաջ բերած են:

Թանկագին են իր բաղդատութիւնները, իմաստասիրական վերլուծումները, մանաւանդ լաւագոյն ընթերցումը գտնելու աշխատանքները:

Թէպէտ Եբրայեցիներէն չէր գիտեր, ինչպէս ինքը կը վկայէ, սակայն հմուտ Յունարէնի և Ասորերէնի, իր մեկնութեան տուած է գիտա-

կան բնոյթ. առ հասարակ Եօթանասնից Թարգմանութեան կը հետեւի (որովհետեւ իր ընթերցողներուն աւելի ծանօթ էր) բայց միշտ խորհուրդի կը կանչէ Բեշիրթուն և Եբրայական բնագիրը:

Եօթը գիրք են իր մեկնածները, Արարածոյ՝ որ գեղեցկագոյնն է և աւելի մանրամասն, Նիկի, Ղեստացոյ, Թուոյ, Բ. Օրինաց, Յեռուայ գիրքը, Դատաւորաց, և Թագաւորացը, չափազանց համառօտուած են, դուրս թողլով ամէնէն կարեւոր մասերը, այն է՝ մեկնիչին անձնական գիտողութիւնները, կարծիքները, բառերու և պարբերութիւններու բաղդատութիւնները, մանաւանդ Յոյն-Ասորի և Եբրայական լեզուներուն պէսպիսութիւնները՝ զորս Արարածոյն մէջ այնքան ձեռնհասօրէն կ'ուսումնասիրէ:

Անշուշտ այս ցաւալի հատումները անճարակ և վատ գրչակի մը գործն են. գծախտաբար Եւսեբիոսի մեկնութեան մէկ ձեռագիր գոյութիւն ունի և չեմ կարծեր ուրիշ մը գտնելու պատեհութիւն Ըլլայ:

Աստուածաշուէնչի Հայերէն Թարգմանութեան 1500ամեակի առթիւ այս փոքրիկ պատառիկը կը հրատարակենք ճաշակ մը տալու համար Ս. Գրքի թարգմանութեան դժուարին գործին շուրջ՝ տուած անոր հեղինակաւոր և հետաքրքրական Թեոփիլոսի մեկնութիւններուն և նոյն ինքն Եւսեբիոսի ոճին ինչպէս նաեւ Ոսկեգարու մեր թարգմանիչներու գործերէն Ըլլալու տեսակէտին նոյնպէս հայերէն լեզուի և ոճի այնքան գանձերուն համար՝ զորս պիտի նշմարէ ուշիմ ընթերցողը:

Ուրախ ենք ըսելու թէ ամբողջական գործին հրատարակութիւնը արդէն մամուլի յանձնուած է և ի մօտոյ լոյս կը տեսնէ մեր տպարանէն:

Հ. ՎԱՆՏԵ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ


ԱՐԱՐԱԾՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ



Թի, որ կամիցի զամենայն լեզուաց նուիրն բանիւք զգաւրութիւնն թարգմանել, չկացուցանէ յանդիման զբանիցն ասացելոց զմիտս: Քանզի բազում են ըստ իւրաքանչիւր լեզուաց առանձինն բանք, որք թէ անդէն ի տեղում մնայցեն, զեղեցիկը և լուսաւորը և յայտնիք և պատշաճաւը թուին այնոցիկ, որք զնոսա ի կիրարկանիցեն. բայց նովին բանիւք յայլ լեզու փոփոխեալ՝ չընծայեցուցանեն զմտացն զաւրութիւն: Բազում ինչ այնպիսի և պէսպէս գտանեմք ի հերբայեցուց լեզուն, և ի նորին դրացւոյն յասորին և յայնոսիկ որ զհին կտակարանսն թարգմանեցին. բազում մթարութիւն է տեսանել որք ըստ բանիցն թարգմանեցին, զի երեւեցին ստուգագոյնս ինչ առնել փութացեալք ի բանիցն թարգմանութիւնս. ի կարգ մտացն որ ի բանիցն ապականէր, յայն ոչ հայեցան. զոր մանաւանդ Ալիւղեայ կրեալ ասեն ուսումնասէրք. որ զբանն ևեթ վիճեաց նոյնգունակ թարգմանել և հանել. և ըստ մտացն ընծայութեան վրիպեալ գտաւ յայլոց առ ի յայտ յանդիման զընծայութիւն մտացն կացուցանելոյ ի բազում իրս, յայնցանէ որք զբանիցն մեկնութենէ անփոյթ արարին, և զգաւրութիւն բանիցն աշխատեցան յայտ յանդիման ցուցանել: Վասն որոյ և թարգմանութեանն իսկ ջան է: Քանզի այն իսկ պատշաճագոյն էր թողուլ զբանիցն զառանձինն պայման ըստ իւրաքանչիւր լեզուացն, և զմիտս լեզուին թարգմանել, և յանդիման կացուցանել, և ոչ առանձինն բանիցն պատշաճիւք, զգաւրութիւն մտացն խաբխալել. եթէ որ ոչ այսպիսի պայմանաւ թարգմանութեան վարիցի՝ աշխատութիւն ընթերցողացն յաճախէ. առ ի չսրբելոյ զմիտսն, հանդիսին զոր առաջի դնիցէ. և

բռնադատիցէ զայն կարգ որ անդ կայցէ յայլ միտս, զոր ոչ և բանքն իսկ յանձին առնուցուն: Քանզի և հարկ իսկ է այնոցիկ որ զյոյն լեզուն ունիցին, և զնոյն ի կիրարկեալ վարիցին, տգէտ լինել հերբայական առանձին բանիցն: Զի որ յունան առանձինն բանիւքն վարիցին ընթերցեալ զթարգմանեալսն, ըստ հերբայեցուց բանիցն բարբառոյ շմորեն. բայց ըստ հերբայական բարբառոյն բարբառ իսկ աւրինակի, վասն ի դէպ ժամանակի մի ինչ առանձինն որոշումն բանականն նոցա առնուլ: Եւ արդ է՝ ինչ հանդերձ ամենայն բանիւքն բարբառովք ի յաւելուածոյ անտի զընդն ասել. որպէս յորժամ զընդարդարն և զընդամպարիշտն յԵկլեսիաստէսն ասիցէ. փոխանակ ասելոյ թէ զարդարն և զամպարիշտն. որով յամենայն իսկ ի թարգմանութեանն այդու առանձինն երբայական բանիւ ասեն վարեալ Ալիւղայ՝ եթէ չէր ծանուցեալ, եթէ առանձինն իմն բարբառոյ այդ երբայեցուց կարի իսկ յոյժ շմորեցուցանէ զընթերցաւորսն: Բայց ոչ շմորեցոյց զմիտսն յայլ և յայլ բանիցն և տաղտկացոյց. վասն բազմաց ի մտաց բանիցն փախչելոյ: Այլ որպէս ասացի իսկ, բարւոք է զլեզուին որ թարգմանիցի թողուլ զառանձինն բանսն, և զմիտսն թարգմանել. իսկ յորժամ առանձինն բանիւքն վարիցին թարգմանիչք լեզուոյն յայլ լեզու, որպէս և այժմ յերբայեցուցն ի յոյն լեզու զմտացն ընծայութիւն երբեմն կասեցուցին, և երբեմն ամենեւին իսկ մթացուցին, և զայս յայնցանէ որք զհերբայեցին իսկ գիտէին՝ տեղեկացեալք զորոմեցաք: Բայց պարտ է գիտել եթէ են բանք յերբայեցին, զորս նոյնաբանութեամբ թարգմանել չէ հնար, վասն առանձին բանիցն խորութեան, և

ի հարկէ թարգմանիչքն զմիտսն եւեթ ըզ-
բանիցն ի յայտ ածել ջանացան: Զի զ'ի
սկզբանէն արար Աստուած զերկինս և
զերկիր, ոչ ի սկզբանէ ասէ հերթայեցին,
այլ ի գլխոյ: Իսկ արդ զլուսն խնդրիցեմք



Հայ. Գրչադիւթ Կոնստ. Ս. Ղազարու.
ՄՈՒՏԻՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ
25. — Աւետարան Սիւնիաց. Թ. 1917,
ամ գրչ. 1307
LES RAMEAUX
Tétraévangile de Siunik. N. 1917, an 1307

յորումն ամենայն ինչ եղեւ, ըստ որում
այլայլութեանն ցանկացաւդ տեղի գտա-
նիցեն, քանզի նոյնաբանութեամբն կամե-
ցան ըստ նմին բանից թարգմանել: Ակիւ-
ղաս և զյայտնաւորութիւն մտացն մթացոյց.
Ի գլխոյն ասէ արար Աստուած զերկին և
զերկիր: Զգլխոյն յոյնք ոչ զ'ի սկզբանէն
գիտեն, այլ կարճ ի կարճոյ: Բայց երբա-
յեցւոց լեզուն, զերկին՝ ոչ զերեւելիս,
այլ զայն որ ի վերոյն է քան զսա, որոյ
և յառաջագոյն է արարածն երկրիւ հան-

դերձ: Զնոսա որ յառաջ էին քան զերե-
ւելի արարածսս զլուսն այլոցն եւս կոչեաց
զնոսա:

Որպէս և զլուսն զի առաջին է մարմնոյ,
ոչ զրիւն միայն, այլ և կենաւք և ըզ-
գայնովք. և պետագոյն ևս քան զայլսն:

(ՄԵԿՆ. ԹԱԳԱԻ.)


Այս իրրեւ նշանակաւ առ այնոսիկ
որ այլագունակս թարգմանեցին եւ առ
որ առանձինն իւրաքանչիւր լեզուաց
և մանաւանդ երբայեցւոյն. որ ասէ թէ ի
կատարած վասն զաղտնեացն որդւոց: Յե-
րբայեցին վասն մահու ասէ: Բայց մարթի
և այնպէս ընթեռնուլ, զի և զգաղտնեացն
յայտ առնիցէ: Դարձեալ վասն աւրիորդի,
և այն զինչ իցէ, զի զձայնաւոր նշանա-
գիրն որ ընդ անձայնսն խառնին ոչ գրի-
ցեն, այլ միայն զանձայնսն: Եւ ապա
յընթեցուածոյն կարգէ, որ հասանել կա-
րէ որ ընթեռնուն ածէ ի վերայ իւրա-
քանչիւր անձայնիցն զձայնաւորն: Եւ
մարթի գնոյն այլ և այլ ազգ ընթեռնուլ,
այսպիսի ինչ:

Համարեաց թէ գրիցէ զկենն միայն և
զուս և զսէ, առանց ձայնաւորացն, և հարկ
լինիցի ընթեցողին յաւելուլ զձայնա-
ւորն, իւրաքանչիւր ումեք անձայնիցն, և
ասել իրրեւ ի կարծեաց, կեր, կուր, կոր,
և այսպէս իրրեւ փոխիցէ զձայնաւորսն,
այլ և այլ բարբառս ցուցանեն: Այսպիսի
շատ ինչ առանձինն կայ յերբայեցին,
պարտ է թէեւ յամենայն լեզուս: Եւ բա-
զում ինչ է որ յերբայեցին արուարար
ասի և ի յոյնն իգաբար: Լուսինն և ծով
անդ արուարար ասի. և ի յոյնն իգաբար:
Եւ փոխանակ միաւորին զբարբառարն զնէ:
Որպէս յորժամ ասիցէ երկինք, փոխա-
նակ ասելոյ թէ երկին: Եւ այս յասորին
և յերբայեցին նոյնպէս գտանի: Նաեւ եկն
և երթն, և կերն և արբն: Եւ որչափ ինչ բա-
նականն: Եւ փոխանակ անուան որ առ մեզ
գտանի, երբայեցին և ասորին արուին այլ

ազգ ասեն զերթն և զեկ, և իգին այլ ազգ,
զի յասելոյ անտի միայն թէ երթ, արուին
զիւրն իւրոցն իմանայ և էգն զիւրն: Նաեւ
այն զոր ասեն, թէ ի վերայ լերին բար-
ձու ել աւետարանիչդ սիրնի, ոչ արուա-
րար՝ այլ իգաբար ասի: Եւ զմեւսն զոր
ասէ Եսայի, թէ զի և ի քեզ Աստուած է
և մեք ոչ զիտէաք՝ իգաբար ասի, և ի քեզն
միայն ասելով՝ յայտ է թէ իգաբար է, և
քանզի ի մեր լեզուս չիք այնպիսի բան
որ զայն նշանակիցէ, չկարաց յայտ առ-
նել, ի քեզն արուարար իցէ՝ թէ իգաբար:
Ամենայն լեզու որ նոյնաբանութեամբ յայլ
լեզու թարգմանիցի, մթին առնի. զի որ
առ մեզ երկին ասի, երբայեցեալն բազ-
մաբար ասի թէ երկինք: Յորժամ ասէ թէ
երկինք երկինց Տեառն են, փոխանակ ա-
սելոյ թէ երկինն երկնիս, որպէս Մովսէս
զերկուց երկնից միայն զարարչագործու-
թիւնն մուծանէ: Սոյնպէս յամենայն լե-
զուն՝ իւրաքանչիւր ուրուք առանձինն բա-
զում ինչ կայ, և յայլ լեզուացն ոչ գտանի:
Որպէս յորժամ ասիցէ՝ եթէ որդի հարկւր
և տասն ամաց էր Յեսու որդի Նաւայ.
փոխանակ ասելոյ, եթէ էր ամաց ճ. և
տասանց: Նոյնպէս և զընդ արդարն և զընդ
ամպարիշտն. փոխանակ ասելոյ թէ զար-
դարն և զամպարիշտն. քանզի երբայե-
ցին զընդն յաճախ վարէ: Զոր և Ակիւ-
ղաս արար զրէ թէ զամենայն իսկ զա-
ռանձինն երբայեցւոցն զրեաց, և մթա-
ցոյց զմիտսն. և այլ և այլ ետ իմա-
նալ: Նոյնպէս և զըմբռնեցէքն զխրատ
եւթանասունքն ի թարգմանութեանն եղին.
և յերբայեցին համբուրեցէք կայ: Եւ արդ
խնդիր է եթէ համբուրեցէքն ընտանեգոյն
իցէ, քան զըմբռնեցէքն:

Եւ զի յարեւուն եղ զխորան նորա զոր
եւթանասունքն թարգմանեցին. յերբայե-
ցին այնպէս ցուցանէ զմիտս, եթէ ի նմին
իսկ յարեւուն բնակեցոյց զնա. զի յարե-
ւուն երբայեցին ի ջերմութեան իւրում
նշանակէ, այս ինքն է. եթէ զարեգակն
յիւրում ջերմութեանն բնակեցոյց: Զի ա-
սիցէ թէ զնա յինքեան բնակեցոյց. զնոյն
անձամբ ընթանալ ասէ. և ինքնին շար-

ժիւ, ըստ այնմ թէ իշխանութիւն իւր ի
վերայ ուսոց իւրոց: Իսկ որ թարգմանեացն
եթէ յարեւու եհար զխորան իւր, մթին
արար զբանն:



Հայ. Գրչադիւթ Կոնստ. Ս. Ղազարու.
ԼՈՒՍՅՈՒՄՆ ՈՏԻՑ
26. — Աւետարան Սիւնիաց. Թ. 1917,
ամ գրչ. 1307
LAVEMENT DES PIEDS
Tétraévangile de Siunik, N. 1917, an 1307

Մեւ թարգման ասէ՝ թէ զարեգակն
բնակեցոյց ի նոսա. փոխանակ ասելոյ
թէ յերկինս բնակեցոյց զարեգակն: Եզե-
կիէլ յետ աւերածի տաճարին տեսանէր
տեսիլ ի Բաբելոն, վասն աւերածոյ տա-
ճարին: Զորոյ: Միթէ զորս Դանիէլն ա-
սէր. թէ յորժամ տեսանիցէք զպղծութիւն
աւերածոյն զի կայցէ ի սուրբ տեղւոյ.
յայտ է թէ ի տաճարին: Եւ թերեւս վասն
պատկերին Հազրիանոսի զոր կանգնեցին
ի սրբութիւն սրբութեանցն ասիցէ, և ըզ-

պղծութիւն կոչէ. ըստ այնմ զոր յարէնան գրեալ է, եթէ մի առնիցես զնմանութիւն ամենայն իրից:

Եթէ խարիցէ ոք զԱստուած զայն նշանակէ, թէ բեւեռիցէ ոք զԱստուած կամ քակիցէ: Եւ արդ ի կարգէն պարտ է իմանալ թէ ո՞ր պատշաճ իցէ: Սիմաքոս ասէ՝ եթէ զրկիցէ ոք զԱստուած և ի դէպ ասէ. քանզի յարէ ի նոյն զտասանորդան և զպտուղս: Զի ահաւասիկ հեռացաւ փախուցանել. ասորին ասէ փախուցեալ: Տուգանք և նենգութիւն, Ասորին ասէ՝ առաւելութիւն և յափշտակութիւն տնանկին: Առաջնորդ իմ և ծանաթ իմ, ասորին ասէ՝ մերձաւոր իմ:

Ընդէր չէր և ի Գանիէլ հակառակ կացեալ թագաւորին ընդ երիս մանկունսն վասն պատկերին: Քանզի յայնուսն Աստուծոյ իւրոյ ի Բէլայ եղ նմա անուն թագաւորն. պատուէր զնա վասն անուանն. զի մի որ զայն անուն ունիցի երկիր պագանիցէ պատկերի նորա. և գտանիցի այն՝ որ զերկրպագութիւնն առնոյր Բէլն. երկիր պագանել այլ իմից ոք ի վեր իցէ քան զնա: Եւ և Աստուած իսկ արգել զնա ի խնդրելոյ յերկրպագութիւնն. զի մի յորժամ Գանիէլ ընդ նոսա ի հնոցն մտանիցէ, և նշանք լինիցին, ասիցէ թագաւորն՝ թէ զի զանուն զիցն իմոց ունէր Գանիէլ յայն սակս եղեն սքանչելիքն:

Լերինք ասէ Գեղըռայ՝ մի ցաւ ի ձեզ և մի՛ անձրեւ: Ո՛չ եթէ լերինքն այնր ինչ պատճառք էին. քանզի և Յոբ, ոչ եթէ առատելութեան զաւր ծննդեան իւրոյ անիծանէր, որպէս թէ աւրն պատճառք ինչ չարեացն որ եկին ի վերայ նորա իցէ: Փիտէր թէ աւուրն Աստուած է արարիչ, այլ զի անիծիւքն զտրտմութիւնն փարատիցէ. որպէս որ երկնէն, ոչ թէ առատելութեան ինչ ատամացէ զպապասաւորն, այլ առ կարեացն աղետի. զի փոքր մի ինչ հայթայթանք լինիցին ի ցաւոցն, նոյնպէս և մայր զորդիս իւր ոչ եթէ ատելութեանն անիծանէ: Ոչ ասէ Ասորին թէ կոյրք և կաղը հակառակ կացին ի մտանելն Դաւթի, այլ թէ սպանանես զկաղս և զկոյրս. եկ

մուտ: Քանզի գիտէին թէ աղքատասէր է. և չմտաբերէ կոտորել զաղքատսն: Եւ զի ո՛չ կամէին թէ մտանիցէ. պատճառս զայն զնէին: Իսկ նա զի՛նչ ասէր. Եթէ որ հարկանէ զկաղ կամ զկոյր յերուսացի, ի Դաւթի անձն մատչի: Ինձ յաղթութիւն ասէ դոցա փրկութիւնն է: Եւ մահ անձին իմոյ դոցա սպանութիւնն է թէ ասիցէ ոք եթէ յայն սակս համբաւեցին յերուսացիքն աղքատացն բանիւ. զի Դաւթ ի ցասունն զրգեացեն. զոլ զոյ հաւանութիւն, բայց ոչ ճշմարտութիւն: Երկիր պագուրք ի տեղուջ ուր կացին ոտք նորա: Ասորին պատուանդանի ոտից նորա ասէ: Որպէս թանձրութիւն հողոյ որ հերձու ի վերայ երկրի: Ասորին ասէ՝ իբրեւ զխոփ զի հերձու զերկիր: Դաւթ՝ արդեամբք մեղաւ զի շնացան. և բանիւք զի զրեաց հրովարտակ առ Յովար սպանանել զՈւրիա: Վասն այնորիկ հալածեցաւ յորդոյն արդեամբք. և նախատեցաւ ի Սիմեայ բանիւք: Եւ հատուցէ ինձ ասէ բարի փոխանակ վշտաց: Մեղաց հատուցումն էր. և զիմորդ ասեն ունէր ակն բարեաց հատուցման յԱստուծոյ: Այլ զիտէր զքաղցրութիւնն Աստուծոյ, զի թէպէտ և վասն մեղաց ածիցէ զպատիժս ի վերայ. այլ իբրեւ բարեաց հատուցիչ գտանի, զի ըզմեղան մաշէ, և զյանցաւորն ի խրատ ածէ: Կինն ասէր ցՅովար՝ թէ ես խաղաղարար եմ: Ասորին չասէ այնպէս, այլ թէ այլ մեղաւ՝ ընդէր այլ փոխանակ նորա մեռանի: Քանզի և ասէր իսկ Յովար. թէ զզլութիւն Սարէի միայն տուր ցիս, և երդուաւ ի Դաւթ և զնաց վաղվաղակի: Ասէ կինն, արդ իսկ տաց զզլութիւն նորա: Ի Դան և յԱրէլն յասորի անդ չիք: Սա ասէ կազմէր զկազմած իւր ի վերայ երեք հարիւրոցն: Ասորին ասէ հանէր գտուր իւր ի պատենից, և կոտորէր որչափ և կամէր: Խնդիր է թէ իսրայէլ յորժամ երթայր ի քաղաքի ուրուք վերայ, հարցանէ՞ր արդեօք նախ զԱստուած. զի երեւեսցի թէ յիրաւի նախատէր կինն զՅովար. զի ոչ նախ եհարց զԱստուած և ապա չոգաւ ի վերայ նոցա: Երեւի թէ յորժամ ի վերայ

Բենիամինի չոգան ցեղքն, հարցին ցԱստուած զազգէն և ոչ զքաղաքէն: Զոր ի դատաւորս զմիոջէն ասէ. եթէ վեց հարիւր այր կոտորեաց առանց անասնոյ. յասորին չիք առանց անասնոյ, այլ թէ խթանաւ, որպէս Սամիսոն ծնաւորին:

Որ ի թագաւորութիւնն աւծանի ո՛չ զի մեռանիցի. այլ զի կենդանի իցէ և յաղթիցէ: Իսկ արդ զու աւծանիցիս առաւել քան զընկերս քո. զի մեռանիցիս խաչիւ: Քանզի ի նոյն յարեալ ասէ. եթէ զմուռս և ստաշին, և զկասիայ: Եկայր իջցուքն և բաժանեցուք զԼեզուս նոցա. Հայր ցՈւրդի և ցՀոգի ասէ: Քանզի զնոյն նշանակ և յառաքեալսն երեւեցաւ, և բաժանեցան նոցա լեզուք իրբեւ ի հոյ: Եթէ արձակելոց էր Յովնաթան զպատանեակն զի ապա յայտնեցի Դաւթի, նետիւքն նշանս տալ զի՞ պիտոյ էր: Քանզի իբրեւ զնայր Դաւթ, կարծիք լինէին զՅովնաթանայ թէ զարքունի խորհուրդս ի վեր եհան. վասն այնորիկ նետիցն նշանաւք զուշակեաց նմա զգնալն. և թէպէտ և հրաժարեցին ի միմեանց, այն ոչ էին ինչ կարծիք արձակելոյ. զի և զիւրին լինիցի երդնու. թէ ես ոչ ինչ խաւսեցայ ընդ նմա վասն զնալոյ: Զերեքկնեցիցն հերձակաւք յամատարայն ասորին ասէ եթէ պնդեցից զաղեղն իմ և ձգեցից ի նպատակն:

Յովքարար վայրարկերովդ ասորին յիրաց անտի իսկ ասէ թէ բարձաւ պատիւ յիսրայելէ: Բայց երգագն, մեկնակ շալակամտոն է, կամ կէս շալակաց: Ի պատերազմի կամ ի խաղաղութեան ոչ իբրեւ զմեղաւոր մեռանի արդարն այլ մին՝ միանգամայն և պատժի իսկ, և զի մի՛ եւս յառաջ խաղայցեն մեղքն արգելու. և մեռն ա[յն] վասն հանդերձելոց ինչ մեղաց զի մի յանցանիցէ և կորուսանիցէ զարդարութիւն: Արդ Յովնաթան ոչ իբրեւ զհայրն իւր մեռաւ, այլ նա իբրեւ զմեղաւոր. և սա զի մի կեցցէ և յորդոցն Դաւթի լլկիցի, որք և զիւրեանց հաւրն զթագաւորութիւնն կամեցան բառնալ, և սպանանել զնա: Աւետարանիչն Մատթէոս ուստի՞ առ զայն՝ եթէ յԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ, զի

ի զիրս մարգարէութեան զայն ոչ ընթերցար, այլ թէ զորդիս իմ, բայց յերայեցին զմիոյ ասէ, որ ի բազմաբարն թարգմանեցաւ: Նոյնպէս և զայն թէ զի՛նչ անուն է նորա. և կամ զի՛նչ անուն որդւոցն նորա, յերայեցին ասէ զի՛նչ անուն է որդւոյ նորա:


Զորթն զորէք մի թարգմանն պտղաբեր թարգմանեաց: Եւ Ակիւղաս միապտուղ. ազգ ինչ է որթոյ որ կոչի սովբեք, որոյ զինին այնպէս թուիս առնի, զի ուր և հասանէ, անդէն ներկանէ: Զեսն կացի թագաւոր ի նմանէ՝ երայեցին որպէս թէ զբազմաց. քանզի ասէ թէ շուրջ զնովաւ կային. և շուրջ կալ ոչ զերկուց միայն ասի. նշանակելի է թէ յԵգիպտոս չէին բաժանեալ ցեղքն և զիմորդ մարգարէն անզրստին բաժանեալ համարի: Եւ պիտոյ է այս յորժամ ընդ հրեայսն ոք վիճիցի: Ոմանք ասեն թէ Աբրահամ մինչ կայր ի հասարակ աւուրն առաջի խորանին, նախ իբրեւ ետես զհրեշտակն մարդիկ համարեցաւ. և ընթացաւ ախորժելով ընդունել իբրեւ զաւտարս: Իսկ իբրեւ մաւտ եղեւ՝ զիտաց թէ հրեշտակք էին քանզի և ասէր թէ աղաչեմ տէր, և աղաչէր զորս ոչ աւելի ինչ քան զմարդիկ տեսանէր. զի եթէ ճանապարհորդք էին, ընդէր ոչ զբաստ ունէին և ոչ այլ ինչ կազմած: Եւ եթէ էր զիտացեալ եթէ հրեշտակք իցեն՝ ոչ այնպէս աղաչէր: Բայց զվարձ աւտարսրութեանն ընկալաւ, զի իբրեւ մարդկան ընդ առաջ ընթացաւ:

Բայց ոմանք ասեն թէ ոչ ի խոնարհ ինչ կերպարանս հայէր որ երեւէինն, այլ ինքն զանձն խոնարհ երեւեցուցանէր: Քանզի արդար էր և զխոնարհսն տեսանէր և աղաչէր, զի ի տաւթոյն զովացուցէ զնոսա: Իսկ եթէ ասիցէ ոք թէ իսկ և իսկ իմացաւ թէ հրեշտակք էին, բառնան ի միջոյ զարմանալիք աւտարսրութեան նորա. բայց յետ յանդեայն ընթանալոյ, և այլոց եւս իրացն. յորժամ ասաց մին թէ ուր է Սառա կին քո, ապա իմացաւ: Իսկ ընդէր իսկ և իսկ իբրեւ չոգաւ ընդ յառաջ նոցա. զմին յերից անտի աղաչէր,

քանզի նա պատուականագոյն քան զնոսա երեւէր:

Սովոր են գիրք ստուարացոցանել զիրա: Համբարձիցն զձեռս իմ յերկինս, ոչ վա-
յելէ Ստուծոյ այլ ի սպառնալիս պիտա-
նացու էր: Եւ թէ դու կոխիցես զերկիր,
ոչ եթէ զերկիր կոխիցէ: Եւ ոչ յորժամ
սպառնայ ի գերութիւն վարել ժողովրդ-
դեանն և ասէր թէ խաւարեացի արեգակն,
և լուսին ոչ տացէ զլոյս իւր. խաւարեցաւ
երբեք արեգակն կամ լուսինն եղեւ ինչ
այնպիսի: Այլ յորժամ սպառնալեաց և
տրամեցոցանելոյ բանք իցեն, յայնժամ
յաճախէ այնպիսի ինչ: Եւ յորժամ խըն-

դութեան իրք իցեն՝ դարձեալ զայն ստուա-
րացոցանէ: Արեգակն ասէ եօթնպատիկ
եղիցի: Եւ ոչ եղեւ երբեք արեգակն եօ-
թնպատիկ: Նոյնպէս և ի տրամութեան
ոչ երբեք խաւարի արեգակն, այլ տրա-
մեցոցն խաւար լինի: Զի ոչ զարեգակն
իրեւ զարեգակն տեսանեն որ ի մեծի
տրամութեանն իցեն. որպէս և գրեալ է
թէ չիք խնդութիւն ամպարշտաց ասէ տէր:
Եւ այլ ուրումն տրամեալ ասէր թէ ծած-
կեաց զիս խաւար: Եւ Տէր ասէ զի՞ կայ
ձեզ խնդրել զաւրն Տեառն. զի խաւար է
նա և ոչ լոյս. և աստուածապաշտացն
լոյս մեծ:



Հայկական Գրչադիրք

Մատենադարան Ս. Ղազարու

Ս. ՂԱԻԿԱՍ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՊԻԾԱԿ

27. — Սևտարամ Սարգիս Պիծակի. Թ. 16, ամ գրչ. 1331

St. LUC ET SARKIS PIDZAK

Tétraévangile de Sarkis Pidzak. N. 16, an 1331

ԱԿՆԱՐԿ ՄԸ

Ս. ԳՐՈՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ



Ս. ԳՐՈՅ Հայկական թարգմանու-
թիւնը ցարդ մասնակի շատ ուսում-
նասիրութեանց նիւթ եղած է մեր ազգային
բանասիրաց ոմանց և օտարագրիներէ շա-
տերու կողմէ և ընդհանուր քննասիրաց պա-
տուաւոր զնահատութեան արժանացած՝ ի-
րաւամբ: Գրեթէ յանկերգ մ'եղած է անուա-
նել զայն րազոնի րարգմանութեանց ուստի
և պատկառանք միայն մերձեցած են անոր
քննութեան: Այս պատճառաւ թերեւս, որ-
քան ծանօթ է մեզի, մինչեւ այսօր եղած
չէ տակաւին ամբողջութեան նկատմամբ
լուրջ ուսումնասիրութիւն մը հետազօտելու
համար բնագրական ամենակարեւոր երկու
խնդիրներ:

1. — Հայրութեան խնդիր, կամ թէ ո՞րն
է այն իսկական բնագիրը որուն վրայ
կատարուած է հայկական թարգմանու-
թիւնը:

2. — Ներքին ճիւղաւորութեան խնդիր,
կամ թէ ինչ յարաբերութիւն կամ ծագ-
ման աղբիւս ունին իրարու հետ հայերէն
թարգմանութեան ցարդ մեզի ծանօթ գրչա-
գիր օրինակները. որմէ իրեւ հետեւանք
յառաջ կու գայ երրորդ ամենակարեւոր
և բարդ խնդիր մ'ալ պատմական և բա-
նասիրական տեսակէտներէ, թէ արդեօք

3. — Մի՞ միայն թարգմանութիւն եղած
է՝ թէ աւելի. ասոր յարակից պարագա-
ներով՝ ժամանակի, տեղոյ և անձանց:

Ներկայ տարւոյս փառապանծ յիշատա-
կը՝ Ս. Գրոց հայերէն թարգմանութեան
հնգետասաներորդ դարադարձին՝ զրդիչ
առիթ մ'եղաւ մեզ այս ուղղութեամբ փորձ
մը կատարելու, աւելի՛ փորբրիկ զննութիւն
մը քան թէ իրապէս բանասիրական քնն-

նութիւն. սակայն որքան ալ համառօտ և
հարեւանցիկ եղաւ մեր ականարկը, և միայն
ըստ պատահման՝ և ոչ յատուկ ընտրու-
թեամբ և շարունակեալ կէտեր էին մեր
համեմատութեան առածները, այնու հան-
դերձ յառաջ եկած արդիւնքն այնքան
հրահանգիչ և լուսատու եղաւ, մինչեւ կը
համարձակինք յուսալ որ պիտի թելադրէ
հաւանօրէն մեր ազգային և օտարագրի
բանասէրներէ գէթ ոմանց ալ սոյն այս
ուղղութեամբ աւելի կատարեալ և շարու-
նակեալ գլուխներու և գիրքերու համեմա-
տութիւններ կատարելու: Համոզուած ենք
որ յատուկ գիրքերու ամբողջական քննու-
թիւն մը՝ այս տեսակէտով կատարուած,
բաւական պիտի ըլլայ լուծելու նաեւ իւ-
րաքանչիւր գրքի թարգմանութեան վե-
րաբերեալ խնդիրները, պարզելով անոր
աղբիւրը, թարգմանութեան ժամանակը (թե-
րեւս նոյն իսկ տեղը) և թարգմանչին ինք-
նութիւնը: Մեր հարեւանցիկ ականարկը շըր-
ջեցաւ աւելի քան յիսնեակ մը կէտերու հա-
մեմատութեան վրայ, ըստ պատահման առ-
նելով զանոնք Ս. Գրոց Եօթնամատենի
(Ծնունդը, Երբ, Թիւք, Ղևտակաւ, Երկրորդ-
դուն Օրինաց, Յետո և Դատարարք) այս
կամ այն էջերէ առանց ընտրութեան, և
անոնցմէ միայն հետեւեալ հինգը (թէպէտ
և ոչ ամէնէն աւելի հետաքրքրականները)
կը ներկայացնենք հոս՝ համառօտութեան
համար:

Թէ ինչո՞ւ միայն Եօթնամատենէն քա-
ղցինք մեր համեմատութիւնները՝ պարզ
է, նախ՝ որ ժամանակի սղութեան և ներ-
կայ պրակիս էջերու անձկութեան պատ-
ճառաւ նպատակ դրած չէինք ամբողջական